

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի
փետրվարի 4-ին

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» 2003 թվականի մայիսի 21-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում «ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով» բառերը փոխարինել «ծխախոտի արտադրանքը (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակում՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (ՀՀ դրամ)		
			2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից

բ. երկրորդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2204	խաղողի գինի	1 լիտր	150		
------	-------------	--------	-----	--	--

գ. յոթերորդ տողից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

2402 (բացառությամբ 2402 10 00011 2402 90 00011 2402 10 00012 2402 90 00012)	ծխախոտի արտադրանք	ներքին արտադրանքի 1000 հատի համար	9 410	10 820	12 445
		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1000 հատի համար	11 070	12 730	14 640
2402 10 00011 2402 90 00011	սիգար	1000 հատ	623 150	641 300	659 450

2402 10 00012	սիգարեւա	1000 հատ	16 995	17 490	17 985
2402 90 00012					

դ. յոթերորդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 2403 (բացառությամբ 2403 99 90 090)	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1 545	1 590	1 635
--	--	------------	-------	-------	-------

ե. յոթերորդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

« 2403 99 90 090	ծխախոտի արտադրանք	ներքին արտադրանքի 1000 հատի համար	1 955	2 295	2 635
		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1000 հատի համար	2 300	2 700	3 100

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասում «և չշալցված կոնյակի սպիրտի» բառերը փոխարինել «, չշալցված կոնյակի սպիրտի և ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների» բառերով, «3000» թիվը՝ «5 500» թվով, իսկ «3500» թիվը՝ «6 000» թվով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մաս.

«5.1. Ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի)՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով, չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար՝

1) մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5 000 ՀՀ դրամից.

2) 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5 500 ՀՀ դրամից.

3) 6-ից մինչև 7 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6 000 ՀՀ դրամից.

4) 8-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9 000 ՀՀ դրամից.

5) 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14 000 ՀՀ դրամից:»:

Հողված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասից հանել «2203,» թիվը:

Հողված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021 թ. փետրվարի 15
Ստեփանակերտ
ՀՕ-8-Ն